



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՔԱՂԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«10» 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 25

Ձեռնարկողը՝

«Էյ Յու Գրուպ» ՍՊԸ
գ. Վազաշեն, փ. 1, փ. 40

Գործունեությունը՝

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերևակման (Կարմիր քարի, ժանգոփ ծորի և Ադույարային մետաստմափոփոխների) փեղամասում 2019-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 25

«10» 05 2019թ.

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերնակման (Կարմիր քարի, Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների) տեղամասում 2019-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Էյ Յու Գրուպ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Գտնվելու վայրը՝

Տավուշի մարզ

Աշխատանքների նպատակն է Կարմիր քարի տեղամասում կատարել հետախուզական, իսկ Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերում՝ որոնողազնահատողական, աշխատանքների իրականացում C_1 , C_2 կարգի պաշարների հաշվարկում և P_1 կարգի կանխատեսումային ռեսուրսների գնահատում:

Երկրաբանահետախուզական հիմնական աշխատանքները հանքային դաշտում նախատեսում է իրականացնել հետևյալ հերթականությամբ և մեթոդաբանությամբ:

- Կարմիր քարի տեղամասի թիվ 1 և 3 հանքային մարմինների մանրակրկիտ հետախուզում, մինչև թիվ 2 բովանգքի հորիզոնը՝ հորատանցքերի և մակերեսային լեռնային փորվածքների միջոցով,

- հանքային մարմինների հզորությունը որոշելու և նմուշարկում կատարելու նպատակով հանքային գոտիներին ու երակներին ուղղահայաց հատող առուների անցում, իսկ նստվածքների՝ 2.0մ-ից ավել հզորության, դեպքում հետախուզահորերի փորում,

- Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերի 1:2000 մասշտաբի տեղագրական և երկրաբանական հանույթի իրականացում,

- թիվ 1 և 3 հանքային մարմինները խորքում ուսումնասիրման նպատակով հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում՝ ապահովելով C_1 կարգի պաշարների եզրագծման համար պահանջվող հետախուզական ցանց,

- հանքաքարի նյութական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրում,

- Կարմիր քարի տեղամասի արդյունաբերական նշանակության վերաբերյալ տեխնիկա-տնտեսագիտական հիմնավորման կազմում,

- Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերի հնարավոր արդյունաբերական նշանակության վերաբերյալ զեկույցի կազմում:



- կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա Կարմիր քարի տեղամասի համար երկրաբանական հաշվետվության կազմում՝ պաշարների հաշվարկմամբ, իսկ Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերի համար՝ երկրաբանական հաշվետվության կազմում:

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերևակման տեղամասը գտնվում է Վազաշեն գյուղի վարչական տարածքում՝ 1.5-4.0կմ հարավ-արևելք:

Կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկան և միջոցներն ընտրելիս հաշվի է առնվել, որ Կարմիր քարի տեղամասում կատարվելու է մանրակրկիտ հետախուզական աշխատանքներ, իսկ հանքերևակման տեղամասերում՝ նրանց տարածական տեղաբաշխվածությունը, տեղանքի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունները, ռելիեֆն ու մորֆոլոգիան:

Ելնելով ուսումնասիրության համար հատկացված տարածքի չափերից, որոշվել է տեղամասերում հետախուզումն իրականացնել մեխանիկական սյունակային հորատման, հետախուզահորերի և հետախուզաառուների փորման, ստորգետնյա փորվածքների և դրանցից նմուշարկում կատարելու միջոցով:

Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերի 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզները կազմելու նպատակով կատարվելու է տեղագրական հանույթ, որի ժամանակ նախատեսվում է հետազոտական բոլոր փորվածքների և նմուշարկման տեղերի, ինչպես նաև ապարների երկրաբանական տեղակայման սահմանների գործիքային տեղադրում:

Ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերի ուսումնասիրելու նպատակով հանքային մարմինները մակերևույթում բացելու համար նախատեսվում է կատարել լեռնային փորվածքներ՝ առուներ և հորեր, նպատակ ունենալով հայտնաբերելու հանքայնացման տարածական օրինաչափությունները, հանքամարմինների մորֆոլոգիան և հզորությունը:

Նախատեսվում է հետախուզաառուներն անցնել իրարից 25.0-150.0մ հեռավորությամբ ժանգոտ ձորի և 200.0մ հեռավորությամբ Ադուլյարային մետասոմատիտների տեղամասերում՝ ապահովելով 2.0մ խորություն և 0.8մ լայնություն: Առուների երկարությունը կախված է հանքայնացման հզորությունից:

Հանքամարմինների, հատկապես չմերկացած մարմինների, ուսումնասիրության համար այս տեղամասերում նախատեսվում է փորել 200.0մ մինչև 5.0մ խորությամբ 40 հետախուզահորեր, այդ թվում ժանգոտ ձորի տեղամասում՝ 26 հոր, իսկ Ադուլյարային մետասոմատիտների տեղամասում՝ 14 հոր:

Համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո բոլոր լեռնային փորվածքները ենթակա են լցման և ռեկուլտիվացիայի: Հետախուզական խրամների անցման ժամանակ հանված 300.0տ. / 100.0մ³ / հանքաքարը, կտեղափոխվի և կենթարկվի տեխնոլոգիական փորձարկումների գործարանային պայմաններում:

Կարմիր քարի տեղամասում նախատեսվում է հորատել 19 թեք հորատանցքեր, ընդհանուր 1500.0գ.մ, հանքային մարմիններում C₁ կարգի պաշարների եզրագծման նպատակով: Հորատանցքերի խորությունը տատանվում է 40-ից 200.0մ միջակայքում:

Մյուս տեղամասերում հանքամարմինների հանքայնացման բնույթը խորքում ուսումնասիրելու նպատակով, ծրագրով նախատեսվում է մեխանիկական սյունակային թեք և ուղղաձիգ հորատանցում՝ 93 և 76մ տրամագծով ավաստե թագիկներով: Ժանգոտ ձորի տեղամասում նախատեսվում է հորատել 15 հորատանցք՝ 1800.0գծ.մ ընդհանուր երկարությամբ, իսկ Ադուլյարային մետասոմատիտների տեղամասում՝ 10 հորատանցք՝ 1400.0գծ.մ ընդհանուր երկարությամբ: Հորատանցման ընդհանուր երկարությունը կկազմի 3200.0գծ.մ:



Իրականացվել է հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի անկման անկյան և ազիմուտի չափում: Տեղանքի տեղագրական հիմքի վրա նշվելու են նմուշառման տեղերը, համապատասխան մատյաններում կատարվելու են նմուշների գրանցում: Կարմիր քարի տեղամասում փաստագրման ծավալը կկազմի ընդհանուր 687.5զծ.մ. (400.0զծ.մ. /խրամներ/, 100.0զ.մ. /հորեր/, 187.5զծ.մ. /առուներ/): Ադուլյարային մետասոմատիտների և ժանգոտ ձորի տեղամասերում այն կկազմի ընդհանուր 1575.0զծ.մ. (1375.0զծ.մ./առուներ/, 200.0զծ.մ. /հորեր/):

Նախատեսվում է նաև ակոսային, համախառն, հանուկային, հսկողական նմուշարկումներ, նմուշների մշակում, հսկողական անալիզներ, հանքաքարի ծավալային զանգվածի որոշում:

Օգտակար բաղադրիչների պարունակության, ինչպես նաև հանքային մարմինների քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է կատարել հարգային և քիմիական անալիզներ՝ բոլոր 2460 շարքային և 90 հսկողական նմուշներով: Ակոսային նմուշներից 60 նմուշ կենթարկվեն ֆազային անալիզների:

Նախատեսվում է համախառն նմուշներից կազմել 200.0կգ քաշով մեկական նմուշ՝ բոլոր երեք տեղամասերից, որոնք ուսումնասիրությունների կենթարկվեն լաբորատոր պայմաններում միներալոգիա-պետրոգրաֆիական և հանքաքարի հարստացման տեխնոլոգիական սխեմայի ընտրության նպատակով:

Դաշտային աշխատանքներին զուգընթաց նախատեսվում է կատարել ուսումնասիրվող տարածքի հիդրոերկրաբանական հետազոտություն, այդ թվում.

- հետազոտել ջրարքի հիմնական հորիզոններն ու գոտիները,
- ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ:

Նախատեսվում է 43 հորատման հարթակների նախապատրաստում, յուրաքանչյուրը 80.0մ² մակերեսով, որից 60%-ը բաժին է ընկնում ճանապարհին (նորոգվող ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը՝ մոտ 4.0կմ):

Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել երկրաֆիզիկական աշխատանքներ՝ Կարմիր քարի 12.0հա տեղամասում կոսմիկական զոնդավորում, իսկ ժանգոտ ձորի և Ադուլյարային մետասոմատիտների 230.0հա տեղամասերում մագնիսահետախուզություն, էլեկրահետախուզություն և կոսմիկական զոնդավորում:

Ծրագրով, հիմնական աշխատանքներին զուգընթաց, նախատեսվում է կատարել նաև ռադիոակտիվ տարրերի զանգվածային որոնում: Լեռնային բոլոր փորվածքները ենթարկվում են Կ-պրոֆիլացման: Համաձայն գործող նորմերի, դիտարկման կետերի փաստումը կատարվում է հետախուզաառուներում և հետախուզահորերում՝ 1.0մ²-ում 2 կետ: Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափիչ (СРП-68-02) էտալոնացում և զգայունության ստուգում:

Աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրը հնարավոր աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով, նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- հորատման հրապարակներում և ավտոճանապարհների վրա, պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը՝ նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0.004գր 1.0մ³ օդում,
- փոշենստեցման նպատակով աշխատանքային գոտիներում պետք է հաճախակի ջրցանում կատարել,
- վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով ագրեգատները շահագործվելու ենն սարքին վիճակում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով ծրագրով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման ժամանակ հողաշերտը հանել, պահեստավորել, աշխատանքների ավարից հետո,

վերականգնել լանդշաֆտը: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հաշվի առնելով խախտված մակերեսները: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, իսկ հողաբուսածածկի շերտը պետք է վերափոխվի 0.2մ միջին հզորությամբ:

Վերականգման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կկազմի 3095.0մ², այդ թվում հետախուզաառուներ՝ 1250.0մ², հետախուզահորեր՝ 75.0մ², խրամներ՝ 400.0մ², հորատման հարթակներ՝ 1370.0մ²: Ըստ իրականացվող աշխատանքների նախահաշվային արժեքի ռեկուլտիվացիոն ծախսերը կազմելու են 7145000 դրամ:

Վազաշենի համայնքապետարանում ս/թ ապրիլի 26-ին իրականացված հանրային քննարկումներում համայնքի բնակիչների և հանրության ներկայացուցիչների մի մասը տարակարծիք էին նախատեսվող գործունեության իրականացման հարցի շուրջը: Համայնքի բնակչությունը՝ համայնքապետի ղեկավարությամբ, կողմ էին նախատեսվող գործունեության իրականացմանը, հիմնավորումը՝ սահմանամերձ գոտում հանքավայրի շահագործման արդյունքում նոր աշխատատեղերի բացումը, բնակիչների սոցալական և տնտեսական վիճակի բարելավման հեռանկարը: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչները և բնակիչների որոշ խմբեր դեմ էին նախատեսվող գործունեության իրականացմանը՝ նկատի ունենալով հանքավայրի հետագա շահագործման հնարավորությունը և դրա հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի մեծ մասը՝ համաձայն ներկայացված կոորդինատների, գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հողային հաշվեկշռում և իրենից ներկայացնում է տարբեր ծառատեսակներից կազմված II-IV բոնիտետային դասի, 0.4-0.6 լրիվության ծառուտներ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում կանխատեսվում է օգտակար հանածոյի շահագործում, ինչն անտառային կոմիտեն գտնում է ոչ նպատակահարմար, հիմք ընդունելով նաև 10 սեպտեմբերի 2015թ. «Հայաստանի Հանրապետության N41 արձանագրային որոշմամբ ստանձնած պարտավորվածությունը՝ «մինչև 2050թ. երկրի անտառապատվածությունը ներկայիս 11.2% հասցնել օպտիմալ 20.1%-ի»:

Փորձաքննական հիմնավորումներ

Ուսումնասիրելով ներկայացված նախնական գնահատման հայտը, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, 26.04.2019թ. Վազաշեն համայնքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, գործընթացի մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները փորձաքննական գործընթացում արվել են հետևյալ եզրահանգումները:

- Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի մեծ մասը՝ համաձայն ներկայացված կոորդինատների, գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հողային հաշվեկշռում և իրենից ներկայացնում է տարբեր ծառատեսակներից կազմված II-IV բոնիտետային դասի, 0.4-0.6 լրիվության ծառուտներ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում կանխատեսվում է օգտակար հանածոյի արդյունահանում, ինչը անտառային հողերում նպատակահարմար է: Նշվածի համար հիմք է հանդիսանում նաև 2015թ. սեպտեմբերի 10-ի «մինչև 2050թ. երկրի անտառապատվածությունը ներկայիս 11.2% հասցնել օպտիմալ 20.1%-ի» «Հայաստանի Հանրապետության N41 արձանագրային որոշմամբ ստանձնած պարտավորվածությունը»:

- Տավուշի մարզպետի N82-Ա որոշմամբ հաստատված 2018թ. հուլիսի 9-ի «Տավուշի մարզի Տավուշ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը



հաստատելու մասին» փաստաթղթի համաձայն հայցվող տարածքը գտնվում է անտառային հողերում, որտեղ հեռանկարային զարգացման ուղղություններում չի ամրագրված հանքարդյունաբերություն և որպես հիմնական ուղղություններ նախատեսված են ագրոարդյունաբերական համալիրի ձևավորումը, գյուղատնտեսության և ռեկրեացիոն ոլորտի (հիմնականում տուրիզմի) զարգացումը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էյ Յու Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերնակման (Կարմիր քարի, Ժանգոտ ձորի և Աղույարային մետասոմատիտների) տեղամասում 2019-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն՝ հիմնավորվելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան